

վերաբերում են տվյալ թեմայի և հարակից խնդիրների ուսումնասիրությանը:

Վ. Բ. Բարխուդարյանը, հասկանալի պատճառով, չի անցրադարձել խոշոր մտածողների, գիտնականների, գրականագետների ու արվեստագետների էյանքին ու գործունեությանը, քանի որ նրանք եղել են համապատասխան մասնագետների ուսումնասիրության օրյակներ և քաջ ծանոթ են ընթերցող հասարակությանը: Քննվող մենագրության ակնառու արժանիքն էլ հենց այն է, որ զբաղում բացահայտված են առցիալ-տրեստեսական ու քաղաքական-մշակութային այն

պայմանները, որոնցում մեավորվում, հասակ են առնում նոր նախընտանում ծնված ու իրենց կյանքին ու գործը այնտեղ սկսած մեր բազմաթիվ հայ մեծերը:

Կարծում ենք, որ շնոր նախընտանի հայկական գաղութի պատմությունը՝ եղանակային ներդրում է այդ մեծ հայաքաղաքի և հայ-առաջնական դարավոր կապերի ու բարեկամության պատմության ուսումնասիրման մեջ:

Վ. Կ. ՈՍԿԱՆՅԱՆ

Э. Г. ТУМАНЯН. Язык как система социолингвистических систем.
Синхронно-диахроническое исследование. М., Наука, 1985.

Լեզվաբանության պատմության մեջ XX դարի 60—70-ական թթ. էր, որ ձևավորվեց հանրայնագրաբանությունը՝ Լեզվաբանության, սոցիոլոգիայի և մասամբ ազգագրության հատման կետում առաջացած այս նոր գիտությունը նախապես բաղաձեռնում էր անգլիստոս երկրներում, բայց և համեմատաբար կարճ ժամանակամիջոցում տարածվեց աշխարհում: Լեզվաբանության այդ եղանակագրական ընդհանրությունները, նրան վիճակված էր վեր հանել և լուծել տեսական և կիրառական բազմաթիվ հարցեր:

Ասվածով մեծ չափով վերաբերում է ՍԱՄԻՆ Զնայան հանրայնագրաբանության ոլորտին վերաբերող առաջին հարցեր սովետական լեզվաբանների կողմից՝ Վինոգրադով, Ժիրմոսևսկի, Գուխման, Շևերդա, Պոստրևյա, Արևդյան, Գ. Սևակ և ուրիշներ) արժանապատիվ են ղեկուն նախքան լեզվաբանության այս ընդհանրական ասպարեզ գայր, այնուամենայնիվ սովետական հանրայնագրաբանական դպրոցի ձևուղը պետք է թվադրել 1970-ական թթ. կեսերով, երբ մեկը մյուսի հետևից Դատարակվեցին Վ. Ա. Ավրորինի, Յու. Դ. Դեշերինի, Լ. Բ. Նիկոլայու, Ա. Դ. Շվեյցերի մենագրությունները, ինչպես և այլ հետազոտողների բազմաթիվ աշխատանքներ:

Մեզանում հանրայնագրաբանությանը առաջին դրավորողներից է նաև գրախոսվող աշխատության հեղինակը: Էթերի Թումանյանի հանրայնագրաբանական ուսումնասիրությունները ևս սկսվել են 1970-ական թթ. և, այս առումով, ներկա աշխատանքը պետք է համարել երկար սպասված, թեև ոչ երբևէ ուշացած, քանի որ հեղինակի այս ուսումնասիրությունը բազմաթիվ արդիական հարցադրումներով, թարմությամբ միանգամայն նոր խոսք և որակ է հանրայնագրաբանության ասպարեզում:

Աշխատության հիմնական (և թեև ոչ ամենահիմնական) գաղափարներից մեկը պարզ է դառնում արդեն վերնագրից՝ «Էկզոն որպես հանրայնագրաբանական համակարգերի համակարգ»։ Համաժողովրդական լեզուն գիտելով որպես հանրայնագրաբանական ընդհանուր համակարգ (ЭНЦИКЛОПЕДИЯ), հեղինակը քննում է նրա բաղկացուցիչ մասերից յուրաքանչյուրը, տալիս նրանց առաջացման ժամանակները, գործառության ոլորտները, զարգացման միտումները: Ազգային (էթնիկ) լեզուն գիտելով որպես գոյաձևերի համակարգ (գրական լեզու, բարբառներ և այլն), հեղինակը ցույց է տալիս, որ գոյաձևերից յուրաքանչյուրը ևս մի բարդ համակարգ է: Այսպես օրինակ, իբրև ազգային լեզվի գոյաձևերից մեկը հանդես եկող գրական լեզուն իր ներքին պետք է գիտվի որպես տարրեր ոճերի (գեղարվեստական, պաշտոնական-գործառական, գիտատեխնիկական, հրապարակախոսական և այլն) համակարգ: Զարգացնելով նշանավոր լեզվաբան Ռ. Ավանեսովի միտքն այն մասին, որ ընդհանուր լեզվական համակարգն իր մեջ պարունակում է ավելի փոքր համակարգեր, է. Թումանյանը բազմակողմանիորեն քննում է լեզվի գոյաձևերի համակարգային կապերը և լեզվի գոյաձևեր համարելով գերագույն համակարգի կառուցման միավոր, հեղինակն իրավացիորեն նշում է, որ լեզվի առանձին գոյաձևերի միջև անանցանելի սահման գոյություն չունի, քանի որ նրանց ներկայացվածքային յուրահատկություններն ունեն իրենց ինքնատիպացման ունակություն:

Գրախոսվող աշխատության ամենահաջողված կողմերից մեկը պետք է համարել դրբի կառույվածքային սկզբունքը: Թեև ևս, առաջին անգամ է. Թումանյանն է, որ լեզվի և նրա կազմի մեջ մտնող գոյաձևերի հարցը լայն ծավալով բեր-

նություն է ենթարկում պատմական տեսանկյունով՝ կապված հասարակարգերի հաջորդանույնության հետ։ Հենց այդ պատճառով է, որ լեզվի տարբերակման և շերտավորման գործընթացները սկսվում են հասարակության կառուցվածքի բարդացման և շերտավորման հետ՝ սկսած համայնական կարգերից և վերջացած ներկա ժամանակներով։ Հասարակական զարգացման պատմական յուրաքանչյուր աստիճան ունենում է իր համապատասխան լեզվավիճակը։ «Լեզվի յուրաքանչյուր գոյածին հասարակության որոշակի սոցիալական շերտի հաղորդակցության միջոց է, համենայն դեպս ծնված է նրանից, թեև հետագայում կարող է ընդլայնել իր հասարակական հիմքը, ինչպես որ այդ դիտվում է գրական լեզվի օրինակում» (էջ 21)։

Դիրքը լուրջացած է երկու մասից։ Առաջինում, որ նվիրված է լեզվի զարգացման միջնագլխին՝ փուլին, հեղինակը քննում է ճշգրիտ լեզվի հարցը, հանգամանորեն կանգ է առնում ստրկատիրական և ավատատիրական հասարակարգերի լեզվավիճակների վրա։ Երկրորդ մասը նվիրված է լեզվի զարգացման ազգային փուլին։

Է. Թումանյանը բավականին մեծ տեղ է հատկացրել բարբառների ծագման, նրանց տարբերությունների մեծացման ու հետագա գործառնությանը, ինչպես և մի կողմից բարբառի, մյուս կողմից միջբարբառային խոսակցականի ու գրական լեզվի առնչությունների բարդ և լեզվաբանության մեջ միշտ վիճելի եղած հարցերին։ Հեղինակը իրավացիորեն նշում է, որ մի լեզվի բարբառները եղել են նրա բաղկացուցիչ մասերը, թվարկում է արտալեզվական այն հանգամանքները, որոնք պատճառ են դառնում մի լեզվի մեջ բարբառային տարբերությունների խորացմանը, երբեմն ընդհուպ մինչև փոխադարձ անհասկանալիության աստիճան։ Իրեն բարբառների գոյացմանը և նրանց միջև տարբերությունների խորացմանը նպաստող արտալեզվական գործոններ հեղինակը նշում է տարածքային, տնտեսական և մշակութային մասնատվածությունը, պատմատնտեսական և կառավարչական-քաղաքական հանգամանքները, տվյալ լեզվացեղային հանրության առանձին հատվածների արտագաղթը, առանձին հատվածների վրա ալիքաբեր շրջապատի ազդեցությունը և այլն։ Ընդհանրապես, բարբառների նվիրված բաժիններում է. Թումանյանն ընդարձակ նյութ է ընդգրկել, իր դիտասպարեզում նա ունեցել է և ընթերցողին է ներկայացրել շատ լեզուների բարբառային իրավիճակները և, կարելի է ասել, որ այս տեսակետից աշխատությունն ունի նաև տեղեկատվական կարևոր արժեք։

Է. Թումանյանը անդրադառնում է նաև բարբառների ծագման ներլեզվական գործոնին՝ բայց

ավելի թուցիկ։ Անշուշտ, ցանկալի կլիներ ավելի հանգամանալից ներկայացնել ամեն մի լեզվի գոյավիճակի էական հատկանիշը՝ անընդհատ փոփոխվելու և տրոփելու ներքին հակումը, որը և մի լեզվի մեջ տարբերակների՝ նախ խոսվածքների, ապա բարբառների և ի վերջո լեզուների ծագման հիմնական պատճառն է։

Հեղինակը ներկայացնում է նաև բարբառների իրավիճակը, և հիմնավոր են նրա դատողությունները գրաբարի, հայոց բարբառների և տարբեր ժամանակներում եղած միջբարբառային հայերենի հարաբերությունների մասին։ Է. Թումանյանը հայոց եղբայր բարբառների մասին գրում է, որ նրանք հավանաբար ծագել են ստեղծագծից՝ լեզու ցեղերի կողմից հայոց լեզուն յուրացնելու հետևանքով (էջ 98)։ Մեր կարծիքով, հայերենի բոլոր բարբառները ծագել են լեզվի ներքին տրոփման համընդհանուր հակման գործոնով, և նրանց տարբերությունները խորացել են է. Թումանյանի թվարկած և վերը հիշված արտալեզվական գործոնների ազդեցությամբ։

Այնուհետև, հեղինակը մանրամասն քննում է միջբարբառային խոսակցական լեզուների (կոյնեն) ծագման և գործառնության հարցերը, այս դեպքում ևս ընդգրկում է տարբեր լեզուների վերաբերող փաստական հարուստ նյութեր ու համոզիչ դարձնում իր եզրահանգումները։ Նա ցույց է տալիս, որ միջբարբառային խոսակցական լեզուն, բացի իր հիմնական բանավոր ձևից, գրավոր գործառնության մեջ է եղել մասնավոր, պաշտոնական և գիմնադիտական գրագրություններում, տնտեսական, օրենսդրական և այլ փաստաթղթերի մեջ։ Գրական լեզուն, որ սկզբնական շրջանում բանավոր մշակված բնույթ է ունեցել, Հնավորվել է հզոր ցեղի կամ ցեղային միության բարբառից (կամ լեզվից), հաճախ էլ՝ միջբարբառային խոսակցականից։ Եթե սկզբնական շրջանում գրական լեզուն հիմնականում սպասարկել էր դիպլոմատիկ և պաշտոնական ոլորտը, ապա հետագայում, իրեն գրավոր խոսք այն սկսել է որոշակի տարածում ստանալ նաև վարչական, գիտական և այլ ոլորտներում։

Ավատատիրական հասարակարգի լեզվավիճակին նվիրված մասում հեղինակը տալիս է այնպիսի հասկացությունների համոզիչ գնահատականները, ինչպիսիք են տարածական և սոցիալական բարբառները, քաղաքային, վերբարբառային և միջբարբառային խոսակցական լեզուները, գրական լեզուն։ Խոսելով վերջինի մասին, է. Թումանյանը գրում է. «Միջնադարյան գրական գրավոր գոյածներ... համաժողովրդական լեզվի ընդհանուր համակարգում զբաղեցնում են սահմանափակ տեղ՝ գործառնելով գլխավորապես գրավոր հաղորդակցության ոլորտում։ Դա ամենից առաջ բացատրվում է նրանց հասարակական

իմքը Հեռ-թյամբ, վերնախավային բնութով. ինչպես նաև կառուցվածքային թերառժեքությամբ (էջ 111):

Պվառ-տիրական նասարակարգի լեզվավիճակի մասին խոսելիս Նեղինակը հանգում է շատ նարեքը Լեռակացության, ըստ որի «անդային գրական լեզուներից բացի լրացուցիչ գործառնություն են կարող են լինել լեզուներ. որոնք զուրա են իդիլ տեղական լեզուն նասարակական տարբերություններից, կամ էլ սեփական գրական լեզուները... Առաջանում է գրական (գրավոր) երկնգովություն և երկարաբառության վիճակ. որն արտացոլվում է երկու տիպերի ընդդիմակայությամբ. 1. Սեփական գրական լեզու—որիչ գրական լեզու, 2. սեփական գրական լեզու—սեփական գրական մեծած լեզու: Ընդդիմակայության տվում: Հենքը բնորոշ են միայն գրավոր հաղորդակցությանը (էջ 118):

Գրախոսվող աշխատության երկրորդ մասն ամբողջությամբ նվիրված է լեզվի զարգացման ազգային հույն: Այստեղ Նեղինակը ներկայացնում է ազգային լեզուների ձևավորման նախադրյալները, մանրամասն վերլուծում է նասարակական և տարածական բարբառների դիրքն ու գործառնության ոլորտները: Խոսելով ազգային փուլի զարգացման լեզվի մասին է. Քումանյանը նշում է, որ «գրական լեզվի առավել էական հատկանիշը նրա բազմաթիվությունն է և նամակողմանությունը, որոնց մեծք բերման նամար գրական լեզուն ծավալում է գործառնական ոճերի յայն նամակարգ» (էջ 181): Նեղինակը գործառնական ոճը նամարում է գրական լեզվի սահմաններում գործող նատուկ ենթանամակարգ, իսկ ոճերը ամբողջության մեջ կազմում են լեզվի ոճական նամակարգը: Աշխատության մեջ տրվում է մեծ շարք գործառնական ոճերի (զեղարվեստական, պատմական, գիտատեխնիկական, արարարախոսական) նամառոտ բնութագիրը: Մեծ նետաբերություն է ներկայացնում գրախոսվող աշխատանքի այն մասը, որը նվիրված է մանականից բանավոր-խոսակցական գրական լեզվին: Վերջինս գիտելով որպես ամենօրյա բանավոր հաղորդակցության ոլորտում գործառնող գրական լեզվի բանավոր-խոսակցական մե, հեղինակը տալիս է նրա տեղը լեզվի գոյանների մեջ, նրա տարատեսակները:

Տեսական մեծ նետաբերություն են ներկայացնում Նեղինակի նախորդ աշխատանքներում մշակված և այստեղ զարգացված մտքերը երկնգովության և երկարաբառության պայմաններում լեզվավիճակների գասակարգման մասին: Խոսելով երկարաբառության պայմաններում ընդդիմակայության կերպանների (մոգելների) մասին, է. Քումանյանն առանձնացնում է չորս առավել հաճախ հանդիպող կերպաններ.

ա) ազգային (էթնիկ) լեզվի զարգացման տարբերակ—տարածական բարբառ ընդդիմակայություն:

բ) ազգային լեզվի գրական տարբերակ—տարածական տարբերակ ընդդիմակայություն:

գ) ազգային լեզվի երկու տարբեր բարբառների ընդդիմակայություն:

դ) ազգային լեզվի բարբառ—պայմանական մասնագիտական լեզու (մարզոն) ընդդիմակայություն:

Անդրադառնալով երկնգովության պայմաններում ընդդիմակայության տիպաբանական կերպաններին, Նեղինակը նշում է, որ այստեղ չիմանականը ազգային լեզու—երկրորդ լեզու ընդդիմակայությունն է: Բայց բանի որ լեզվական յուրաքանչյուր նամակարգ բաղկացած է լեզվի գոյանների տարբեր ենթանամակարգներից, ապա է. Քումանյանը առանձնացնում է ինչպես ազգային, այնպես էլ երկրորդ լեզվի գոյանների ընդդիմակայության ութ տիպաբանական կերպաններ:

Լեզվավիճակները կերպաններում բնորոշ սկզբունքների մշակումը է. Քումանյանի գրքում նրա տեսական խոշոր նվաճումներից է. բնորոշում, Նեղինակը սկզբունքների մշակման հետ միասին տալիս է նաև հարցերի այն շրջանակը, որոնց լուծմանը պետք է ուղղվեն նմանաբնույթ նետադրություններն առաջիկայում:

Գրախոսվող աշխատանքի գերը նշանակալից է նաև նայերենագիտության տեսանկյունից և, որոշակի վերապահությամբ, այն կարելի է նամարել պատմական զարգացման ընթացքում նամարել լեզվի և նրա կազմի մեջ մանող առանձին նամակարգերի փոխհարաբերությունների զարգացման պատմություն: Ցուրաբանչյուր նասարակարգի մասին խոսելիս Նեղինակն առանձին կանգ է առնում հայերենի, նրա տարբեր բարբառների և մյուս գոյանների գործառնության վրա, իսկ աշխատության այն մասը, ուր խոսվում է գրական երկնգովության պայմաններում լեզվավիճակի ներառվածության կերպանների վերլուծության մասին, Նեղինակն ամբողջությամբ նվիրել է հայերենին: Ե. Քումանյանը այստեղ մանրամասն նետագոտում է հայոց լեզվի ամբողջ նամակարգը, նրա բաղկացուցիչ մասերը, նոր հայերենի և գրարարի օրինակով զարգացնում է իր միտքը լեզվական ընդդիմակայության մասին: Լեզվաբանական մանրակրկիտ վերլուծության չիման վրա տալիս է ընդդիմակայության երկու անդամների նասարակական և գործառնական բնութագիրը, սգտագործման ոլորտները: Հեղինակը կանգ է առնում գրական հայերենի տարբերակների վրա, նշում է նրանց զարգացման հետագա ուղին: Ըստ երկնգովի, մեծքի տակ եղած անբաժնելի աղբյուր:

ների որոշ պակասն է պատճառ դարձել, որ նա աշխարհարարի ծագման ժամանակաշրջանի մասին խոսելիս չի անդրադարձել նոր գրական հայերենի այնպիսի մի կարևոր փուլի, ինչպիսին է XVII դարի միասնական (առանց արևելահայերենի և արևմտահայերենի բաժանման) վաղ աշխարհարարը, որի ականջատ հետքերն առկա են է. Թումանյանի ուղադրությանն արժանացած XVІІІ դարի «քաղաքացիական» հայերենում:

Հայերենագիտության ժամանակակից հարցերի լուծման համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում հեղինակի մշակած լեզվավիճակների կերպաձեւման (մոդելավորման) սկզբունքները, որոնք կարող են ուղեցույց դառնալ Հայկական ՍՍՀ արդի լեզվավիճակի ուսումնասիրության տեսական և գործնական հարցերի արժարժման: Համարյա քննադատական հանրապետության ազգային կադմի համեմատական միատարրությանը, նրա արդի լեզվավիճակն աչքի է ընկնում զգալի բարդություններով: Այստեղ դրական լեզվի և նրա դորմառական ամենատարբեր ոճերի հետ միասին լայն տարածում ունեն տեղական բարբառները, ժողովրդախոսակցական հայերենի տարբերակները, հանգամանք, որ առանձին բարդություն է տալիս հանրապետության և հատկապես նրա մայրաքաղաքի՝ Երևանի արդի լեզվավիճակին:

Հանրապետության բնակչությանը ընդհանուր է նաև ազգային—ուսերեն երկլեզվության լայն տարածումը: Եվ վերջապես, հանրապետության բնակչության մեջ զգալի տարածում ունեն ուրիշ լեզուները. եթե սահմանային շրջանների բնակիչների մեջ անմիջական շփումների հետևանքով որոշակի տարածում ունեն հայ—ազերբեջաներեն և հայ—վրացերեն ձևերը, ապա հայերենադարձների մեջ տարածված են օտար լեզուները՝ ինչպես եվրոպական, այնպես էլ արեւելյան: Մեր կարծիքով, հանրապետության արդի լեզվավիճակի անբաժանելի արանական ուսումնասիրումը պետք է ընթանա նաև է. Թումանյանի մշակած սկզբունքների օգտագործմամբ:

Էթերի Թումանյանի այս աշխատությունն ունի նաև այլ ընդգրկումներ և արժանիքներ, որոնց ընդհանուր մի գրախոսականում անդրադառնալն անհարկ է: Կարևորն այն է, որ ասպարեզ է հանված հանրալեզվարանական շատ ուղադրավ, մեծարժեք մի աշխատանք, որն իր հաստատուն տեղը կունենա նաև հայոց լեզվի և նրա պատմության ուսումնասիրմանը նվիրված լավագույն աշխատությունների շարքում:

Բաճախի. դիմ. դոկտոր Ռ. Ա. ԻՇԽԱՆՅԱՆ
Հ. Փ. ԴԱՆԻՍՅԱՆ

С. А. ЕСАЯН, М. Н. ПОГРЕБОВА. Скифские памятники Закавказья. М., 1985, 151 с.

История скифов, особенно в их ранний «героический период», самым тесным образом связана с Кавказом и Закавказьем. Без полного сбора, учета и аналитического рассмотрения скифских материалов, происходящих с этой территории, нельзя решать вопросы археологии и истории собственно скифов, нельзя верно понять многие факты истории местных племен этого региона в переломные моменты их сложной и интересной истории.

Благодаря исследованиям Б. Б. Пиотровского, А. А. Иессена, Е. И. Крутинова, В. Б. Виноградова, В. А. Ильинской, В. Г. Петренко, Л. К. Галаниной, В. Ю. Мурзана, В. М. Батчаева и В. И. Козенковой, скифская культура на территории Северного Кавказа исследована сейчас неплохо. Много сделано для исследования памятников скифской поры Центрального Кавказа Б. В. Техов. Изучались памят-

ники скифского времени и вопросы взаимоотношения местного и пришлого скифского населения отдельных регионов Закавказья Б. Б. Пиотровским, М. Н. Пирцхалава, Д. А. Халиловым, Г. Ф. Гобеджишвили. В этих условиях особое значение приобретают работы обобщающего характера, работы, не ограниченные рамками отдельного могильника той или иной республики, края—всего огромного территориального массива в целом. Ведь вопрос о скифских памятниках на территории Закавказья и Кавказа является важнейшей частью истории всего массива. Эта задача не может быть решена без исчерпывающей мобилизации всего накопленного за многие десятилетия, без глубокого знания памятников местных культур, в частности, в погребальном обряде которых прослеживаются скифские черты, без учета собственно скифских памятников.